ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N ՎՁՄՇՀԱՇՁԲ-16/03-2-5

Մարզային /տեղական/ նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների գնման

ք. Եղեգնաձոր <<24>> հունվարի 2020թ.

<<ՀՀ Վայոց ձորի մարզպետարանը, ի դեմս գլխավոր քարտուղար ղեկավար Կ Սահակյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Վայքի ՃՇՇ>> փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս տնօրեն Կ.Գևորգյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից՝ հիմք ընդունելով 2016թ. հունվարի 15-ին կնքված ՎՁՄՇՀԱՇՁԲ-16/03-2 գնման պայմանագիրը (այսուհետև՝ Պայմանագիր) կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

12. Համաձայնագրի առարկան և գործողության ժամկետը

1.1 Կապալառուն պարտավորվում է Պայմանագրով և սույն Համաձայնագրով սահմանված կարգով Պատվիրատուի հանձնարարությամբ իրականացնել սույն Համաձայնագրի N 1 հավելվածով նախատեսված ՀՀ Վայոց Ձորի մարզի Վայքի տարածաշրջանի մարզային /տեղական/ նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքները (այսուհետև՝ Աշխատանքներ)՝ համաձայն սույն Համաձայնագրի N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի և Աշխատանքների արդյունքը հանձնել Պատվիրատուին, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել Աշխատանքները և վճարել դրանց համար:

1.2 Աշխատանքների հանձնում-ընդունումը կատարվում է Պայմանագրով սահմանված կարգով՝ կարգի պահանջներին համապատասխան:

1.3 Սույն համաձայնագրով սահմանված պարտավորությունները տարածվում են 2020 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա և գործում են մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը:

Դեկտեմբերի 20-ից հետո կատարված աշխատանքների համար վճարումները կիրականացվեն նշված աշխատանքները իրականացնելու համար հաջորդող տարվա հատկացված միջոցների հաշվին:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրով Կապալառուի կողմից կատարման ենթակա Աշխատանքների ընդհանուր գինը կազմում է 63458245 ՀՀ դրամ / վաթսուներեք միլիոն չորս հարյուր հիսունութ հազար երկու հարյուր քառասունհինգ ՀՀ դրամ /, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, այդ թվում ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հարկերը, պարտադիր այլ վճարները:

2.2 Պատվիրատուն իրեն հանձնված Աշխատանքների դիմաց վճարում է Պայմանագրով նախատեսված կարգով՝ սույն Համաձայնագրի N 3 հավելվածին՝ ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցին համապատասխան:

3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները, այդ թվում Աշխատանքների հանձնման-ընդունման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

3.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.3 Սույն համաձայնագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N 1, 2 և 3 հավելվածները հանդիսանում են սույն համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.4 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

3.5 Կատարողը պարտավոր է ապահովել ճանապարհային կահավորանքի, այդ թվում՝ նաև արգելափակոցների, վնասման դեպքերի հաշվառումը և ճանապարհային կահավորանքին պատճառված վնասների վերականգնումը՝ համաձայն 2010 թվականի նոյեմբերի 4-ի թիվ 1419-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ աղյուսակով սահմանված պահանջների:

3.6 Կատարողը սույն համաձայնագրի 3.5 կետով սահմանված՝ ճանապարհային կահավորանքին պատճառված վնասի վերականգնման համար կարող է փոխհատուցում պահանջել վնաս պատճառող ֆիզիկական կամ իրավաբանական անձից /այդ թվում՝ ապահովագրական ընկերությունից/ :

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀՎայոցձորիմարզպետարան | ,,Վայքի ՃՇՇ,,ՓԲԸ |
| ք.Եղեգնաձոր, Շահումյան 5 | ՀՀ Վայոց ձորի մարզ, ք.Վայք |
| ՀՀֆինանսներինախարարության գործառնական վարչություն | ,,Հայբիզնեսբանկ,, ՓԲԸ |
| ՀՀ 900351084026 | ՀՀ 115004676561 |
| ՀՎՀՀ08907717 | ՀՎՀՀ09100676 |
| _________ Կ.Սահակյան (ստորագրություն) | _________ Կ. Գևորգյան (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված N 1
<<24>> հունվար 2020թ. կնքված N ՎՁՄՇՀ ԱՇՁԲ-16/03-2-5
*համաձայնագրի*

Չափաբաժին 2
ՀՀ Վայոց ձորի մարզի մարզի Վայքի տարածաշրջանի մարզային /տեղական/ նշանակության ավտոճանապարհների վիճակը, սպասարկման մակարդակները և սահմանային արժեքները 2020 թ. հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը

| Ավտոճանապարհի անվանումը և պիկետաժը | Ավտոճանապարհի Տեխնիկական կարգը | Սպասարկվող հատվածների ընդհանուր երկարությունը /կմ/ | Ճանապարհի առկա վիճակի ծածկագիրը | Սպասարկման պահանջվող մակարդակ | Սպասարկվող հատվածի երկարությունը /կմ/ | Միավորի գինը / դրամ/ | Ընդամենը / դրամ/ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| Պահպանման ժամանակաշրջանը՝ ՁՄԵՌ | | | | | | | |
| Մ2 - Կարմրաշեն կմ 0.0- կմ 18.8 | Տեղական II-IV | 19.0 | | Միջին | 18.8 | 330251 | 6208718.1 |
| Հ42 – Մարտիրոս - Բարձրունի կմ 0.00 – կմ 13.3 | Տեղական II-IV | 14.2 | | Միջին | 13.3 | 330251 | 4392338.3 |
| Մ2 - Զեդեա կմ 0.0-կմ 6.5 | Տեղական II-IV | 7.0 | | Միջին | 6.5 | 330251 | 2146631.5 |
| Հ42 – Զառիթափ – Գոմք - Կապույտ կմ 0.0 – կմ 10.5 | Տեղական II-IV | 12.0 | | Միջին | 10.5 | 330251 | 3467635.5 |
| Մ2 - Արտավան կմ 0.0-կմ 8.5 | Տեղական II-IV | 9.0 | | Միջին | 8.5 | 330251 | 2807133.5 |
| Վայք - Ազատեկ կմ 0.0 – կմ 7.2 | Տեղական II-IV | 7.4 | | Միջին | 7.2 | 330251 | 2377807.2 |
| Տ-9-20 – Հերհեր կմ0.0-կմ2.0 | Տեղական II-IV | 2.0 | | Միջին | 2.0 | 330251 | 660502 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Հ42 – Փոռ – Ձեղեա<br>կմ 5.0 – կմ 9.3 | Տեղական II-IV | 23.6 | | Միջին | 4.3 | 330251 | 1420079.3 |
| Մ2 - Արին<br>կմ1.5-կմ 6.1 | Տեղական II-IV | 7.0 | | Միջին | 4.6 | 330251 | 1519154.6 |
| Ընդամենը | | 101.2 | | | 75.7 | | 25000000.0 |
| Պահպանման ժամանակաշրջանը՝ ԳԱՐՈՒՆ-ԱՄԱՌ-ԱՇՈՒՆ | | | | | | | |
| Հ42 – Մարտիրոս - Բարձրունի<br>կմ0.00 – կմ0.5 և կմ1.7 – կմ7.7 | Տեղական II-IV | 14.2 | SL(I) | Միջին | 6.5 | 731788.1 | 4756622.6 |
| Հ42 – Մարտիրոս - Բարձրունի<br>կմ 0.5 – կմ 1.7 և կմ8.1 – կմ 12.4 | Տեղական II-IV | - | SF(II) | Բավարար | 5.5 | 1260000 | 6930000.0 |
| Վայք - Ազատեկ կմ0.0 – կմ7.2 | Տեղական II-IV | 7.4 | SL(I) | Միջին | 7.2 | 731788.1 | 5268874.3 |
| Հ42 – Փոռ – Ձեղեա<br>կմ5.0 – կմ8.8 | Տեղական II-IV | 23.6 | SF(II) | Բավարար | 3.8 | 1260000 | 4788000.0 |
| Մ2 – Արտավան<br>կմ0.0 – կմ7.3 | Տեղական II-IV | 9.0 | SF(II) | Միջին | 7.3 | 1440000 | 10512000.0 |
| Մ2 – Արին<br>կմ 0.45 – կմ 1.95 և կմ2.7 – կմ5.507 | Տեղական II-IV | 7.0 | SF(II) | Միջին | 4.307 | 1440000 | 6202748.0 |
| Ընդամենը | | 61.2 | | | 34.607 | | 38458245.0 |
| Ընդամենը Վայքի տարածաշրջանով | | | | | | | 63458245.0 |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Վայոց ձորի մարզպետարան ք.Եղեգնաձոր,
Շահումյան 5
ՀՀֆինանսների նախարարության գործառնական
վարչություն
ՀՓ 900351084026
ՀՎՀՀ08907717
Կ.Մահակյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

,,Վայքի ՃՇՇ,,ՓԲԸ
ՀՀ Վայոց ձորի մարզ, ք.Վայք
''Հայբիզնեսբանկ'' ՓԲԸ
ՀՀ 11500467656l
ՀՎՀՀ09100676
Կ.Գևորգյան
(ստորագրություն)

Հավելված 2
«24» հունվար 2020թ. կնքված
ՎՁՄՇՀԱԾՁԲ-16/03-2-5 համաձայնագրի

Գնման ժամանակացույց
(ՀՀ Վայոց ձորի մարզպետարան)

/ՀՀ դրամ/

| Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման /CPV/ | Ձեռք բերվող աշխատանքի անվանումը | Գնումը 2020թ. ընթացքում | | | | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | I եռամսյակ | II եռամսյակ | III եռամսյակ | IV եռամսյակ | |
| 2 | 45231176 | ՀՀ Վայոց ձորի մարզի Վայքի տարածաշրջանի մարզային /տեղական/նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանում, ընթացիկ պահպանում և շահագործում | 20000000 | 8000000 | 22000000 | 13458245 | 63458245 |

Պատվիրատու
ՀՀ Վայոց ձորի մարզպետարան
ք.Եղեգնաձոր, Շահումյան 5
Եղեգնաձորի ՏԳԲ
ՀՀ 900351084026
ՀՎՀՀ 08907717
---------------------- Գ. Սահակյան
(ստորագրություն)

Կատարող
ՀՀ Վայոց ձորի մարզ ք.Վայք
Վայքի <<ՃՇՇ>>ՓԲԸ
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
ՀՀ 11500467650[illegible]
ՀՎՀՀ 09400676
---------------------- Ա. Գևորգյան
(ստորագրություն)

Հավելված 3
<<24>> հունվար 2020թ. կնքված
N ՎՁՄԾՀ ԱԾՁԲ-16/03-2-5 ծածկագրով գնման համաձայնագրի

# ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման /CPV/ | Աշխատանքների անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2020թ. ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | ԸՆԴԱՄԵՆԸ |
| 2 | 45231176 | ՀՀ Վայոց ձորի մարզի Վայքի տարածաշրջանի մարզային /տեղական/ նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանում, ընթացիկ պահպանում և շահագործում,, | - | 110000000 | 200000000 | 220000000 | 240000000 | 280000000 | 350000000 | 430000000 | 500000000 | 550000000 | 590000000 | 63458245 | 63458245 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ Վայոց ձորի մարզպետարան
ք.Եղեգնաձոր, Շահումյան 5
ՀՀֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
ՀՀ 900351084026
ՀՎՀՀ08907717

_________________ Վ.Սահակյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ՝**

,,Վայքի ՃՇՇ,,ՓԲԸ
ՀՀ Վայոց ձորի մարզ, ք.Վայք
''Հայբիզնեսբանկ', ՓԲԸ
ՀՀ 115004676561
ՀՎՀՀ09100676

_________________ Կ.Գևորգյան
(ստորագրություն)

Հավելված 10

<<ՎՁՄՇՀ ԱՇՁԲ--16/03-2-5 >> ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի

# ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ N <<ՎՁՄՇՀ ԱՇՁԲ -16/03-2-5>>

ք. Եղեգնաձոր „24„ 01 2020 թ.

«Վայքի ՃՇՇ» ՓԲԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն՝ Կարո Գևորգյանի, անձն. AM 0620156 տրված 30.01.2012թ.-ին 020-ի կողմից, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի համաձայնությունը.

## 1. ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Հաշվի առնելով, որ Ընկերությունը մասնակցում է <<ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկ (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ ՀՀ Վայոց ձորի մարզի Վայքի տարածաշրջանի մարզային /տեղական/ նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների ձեռքբերման << ՎՁՄՇՀ ԱՇՁԲ -16/03-2-5 >> ծածկագրով շրջանակային համաՙայնագրերի միջոցով գնման ընթացակարգին և պետք է ներկայացնի պայմանագրի կատարման ապահովում, ուստի սույն ընթացակարգի արդյունքում կնքվելիք գնման պայմանագրի՝ Ընկերության կողմից ժամանակին և ամբողջ ծավալով կատարումն ապահովելու նպատակով Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնությունը, կից ներկայացված վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>:

1.2. Ընկերության կողմից սույն ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը ոչ պատշաճ կատարելու, չկատարելու կամ կատարելուց հրաժարվելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնությանը կից ներկայացված վճարման պահանջագիրը ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին՝ վճարելու պահանջագրի մեջ նշված գումարը:

1.3. Պահանջագիրը բանկ ներկայացնելուց հետո տասնօրյա ժամկետում Պատվիրատուին գումարը բանկից անկախ պատճառներով չփոխանցվելու դեպքում, Պատվիրատուն Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

## 2.ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Տուժանքի սույն համաձայնությունն ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից ստորագրման և կնքման պահից և գործում է մինչև Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

2.2 Սույն Համաձայնության կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

Ընկերության անվանումը «Վայքի ՃՇՇ» ՓԲԸ

Ընկերության հասցեն ՀՀ Վայոց ձորի մարզ, գ. Զառիթափ, 23 փողոց տն. 2

Ընկերության բանկի անվանումը «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ ք. Երևան

Ընկերության Հ/Հ 115004676561

Ընկերության ՀՎՀՀ 09100676

Տնօրեն (ստորագրություն) Կարո Գևորգյան

Գլխ. հաշվապահ (ստորագրություն) Նարեկ Բաբայան

Կ.Տ.

1.

ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ N

(պայմանագրի կատարման ապահովում)

2.

Ներկայացման ամսաթիվը "____" ______ 20____ թ

3. Ընկերություն (այսուհետ՝ վճարող՝) «Վայքի ճՇՇ» ՓԲԸ

4. Վճարողի բանկը՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ

5. Վճարողի հաշվի համարը՝ 115004676561

6. Վճարողի ՀՎՀՀ՝ 09100676

7. Վճարողի ՀԾՀ

8. Շահառու՝ <<ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկ

9. Շահառուի ՀՎՀՀ՝ 08907717

10. Շահառուի բանկը՝ ՀՀ ֆինանսների Նախարարության գործառնական վարչություն

11. Շահառուի հաշվի համարը /հշ. N/ 900351084026

12. Գումարը թվերով և բառերով՝ 6345825 (վեց միլիոն երեք հարյուր քառասունհինգ հազար ութ հարյուր քսանհինգ) ՀՀ դրամ

13.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ AMD

14. Գործարքի /վճարման/ նպատակը՝ պայմանագրի ապահովում՝ տուժանք

15. Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ ՎՁՄ ՇՀԱՇՁԲ-16/03-2-5

16. Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը

17. կից՝------էջ

19ա. Շահառուի ստորագրությունները՝

/__________________/

/__________________/

19բ. Կ.Տ.

18ա.

Վճարողի ստորագրությունները՝

Կ. Գևորգյան /

Ն. Բաբայան /

18բ. Կ.Տ.

Կատարված է շահառուի բանկի կողմից

20.ա. /__________________/

/ստորագրություն/

20.բ. Կ.Տ.

«____» _______ 20___ թ.

Կատարված է վճարողի բանկի կողմից

21.ա. /__________________/

/ստորագրություն/

21.բ. Կ.Տ.

22. Կատարման ամսաթիվը «____» _______ 20___ թ.

---

*Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*